ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/0468/02/25

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

3 փետրվարի 2025թ. | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով Համլետ Ռաֆիկի Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲ ընկերություն՝ թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետով կայացված որոշումը՝ «Լուսի-Արեգ» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

Համլետ Ռաֆիկի Մարտիրոսյանը 2025թ. հունվարի 17-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, երրորդ անձ՝ «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲ ընկերության՝ թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետով կայացված որոշումը՝ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, ինչպես նաև թիվ 3 արձանագրության 4.1-րդ կետով կայացված որոշումը՝ «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲ ընկերությանը գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու /ճանաչելու/ մասին, անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի 2025թ. հունվարի 23-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան:

Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2025թ.

հունվարի 27-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. հունվարի 29-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2025թ. հունվարի 17-ին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համլետ Ռաֆիկի Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲ ընկերություն՝ թիվ 2 արձանագրության 7.1-րդ կետով կայացված որոշումը՝ «Լուսի-Արեգ» ՍՊ ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2025թ. հունվարի 17-ին:
Թիվ ԵԴ2/0468/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թ. մարտի 7-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.02.03 17:47:46 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am